

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ. СООБЩЕНИЯ. REPORTS.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՅՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ
meri.sargsyan@isec.am

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Բաժնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր
vazgengurgeni@mail.ru

ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ.
sonmiq20@gmail.com

ՍԵՂԱ ԲԱԴՐԱՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ
Ավագ լաբորանտ, հայցորդ
seda-baghramyan@mail.ru

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-87

Համառոտագիր

Բազմալեզու միջավայրում գործառու լեզուն սովորաբար բավականին տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական և զբաղմունքային բնութագրերի. պետական լեզվից բացի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ նույնպես գործառու են, մայրենի լեզուն միայն մեկը չէ, կա նաև տարբեր քաղաքներին ու տեղանքին բնորոշ ընդգծված մասնագիտացում: Բազմալեզու միջավայրում լեզվավիճակը ոչ միայն ձեռք է բերում իրեն բնորոշ գծեր, այլև որոշակի ազդեցություն է ունենում տվյալ տեղանքից դուրս ապրող լեզվակիրների վրա: Սույն հոդվածում քննում ենք լեհական համայնքում հայերենի ուսուցման առանձնահատկությունները և խնդիրները: Անդրադառնում ենք ուսուցման գործընթացին և՛ դպրոցական, և՛ բուհական համակարգում: Ինչպես հայկական մյուս համայնքներում, այնպես էլ լեհականում, հայապահպանությունը եղել և շարունակում է մնալ սփյուռքի ամենագլխավոր խնդիրը: Չնայած կատարվող աշխատանքներին՝ պետք է նաև արձանագրել, որ հետպատերազմյան շրջանից սկսած՝ սկսվել է հայերի ուժացման գործընթացը: Այժմ այդ համայնքի մեծ մասը

հայերեն չգիտի, և նրանց կարելի է համարել լեհական հասարակության մեջ ամբողջովին ձուլված:

Քանալի բառեր և բառակապակցություններ՝ բազմալեզու միջավայր, մայրենի լեզու, լեզվավիճակ, լեհական համայնք, հայերենի ուսուցում, սփյուռքի լեզու:

**FEATURES OF THE ARMENIAN LANGUAGE TEACHING IN THE
ARMENIAN
COMMUNITY OF POLAND**

MERI SARGSYAN

RA NAS Language Institute
Senior Researcher, Ph.D., Associate Professor
meri.sargsyan@isec.am

VAZGEN HAMBARDZUMYAN

RA NAS Language Institute
Head of Department, D.Ph., professor
vazgengurgeni@mail.ru

SONA MIKAYELIAN

RA NAS Language Institute
Senior researcher, Ph.D.
sonmiq20@gmail.com

SEDA BAGHRAMIAN

RA NAS Language Institute
Senior Laboratory Assistant, Researcher
seda-baghramyan@mail.ru

Abstract

In a multilingual milieu, linguistic expression typically exhibits discernible distinctions based on the vocational and professional attributes of its speakers. Furthermore, apart from the dominant official language, various other significant languages find usage within the community, and the mother tongue, while important, does not stand as the sole linguistic vehicle. In this context, the linguistic landscape of a multilingual setting not only assumes distinct characteristics but also exerts a discernible influence upon language users residing beyond its geographical boundaries. The present study scrutinizes the idiosyncrasies and challenges associated with the pedagogical aspects of Armenian language instruction within the Polish diasporic community. This study explores the learning process within both the school and university systems. Similar to Armenian communities elsewhere and within the Polish diaspora, the preservation and safeguarding of Armenian identity have historically constituted a paramount concern for the diaspora. However, it is essential to acknowledge that despite persistent efforts in this regard, the process of assimilation among Armenians commenced during the post-war era. Presently, a

significant proportion of this community no longer possesses proficiency in the Armenian language, and they can be regarded as fully integrated into Polish society.

Keywords and Phrases: multilingual environment, mother tongue, language situation, Polish community, teaching the Armenian language, diaspora language

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ПОЛЬШИ

МЕРИ САРГСЯН

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н., доцент

meri.sargsyan@isec.am

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Институт языка НАН РА

Заведующий отделом, д.ф.н., профессор

vazgengurgeni@mail.ru

СОНА МИКАЕЛЯН

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н.

sonmiq20@gmail.com

СЕДА БАГРАМЯН

Институт языка НАН РА

Старший лаборант, соискатель

seda-baghramyam@mail.ru

Аннотация

В многоязычной среде языковое выражение, как правило, имеет заметные различия, обусловленные профессионально-квалификационными характеристиками его носителей. Кроме того, помимо доминирующего официального языка, в обществе используются и другие значимые языки, а родной язык, при всей его важности, не является единственным языковым средством общения. В этом контексте языковой ландшафт многоязычной среды не только приобретает особые черты, но и оказывает заметное влияние на пользователей языка, проживающих за ее пределами. Настоящее исследование посвящено изучению особенностей и проблем, связанных с педагогическими аспектами преподавания армянского языка в польской диаспоре. В данном исследовании рассматривается процесс обучения как в школьной, так и в университетской системах. Как и в других армянских общинах, так и в польской диаспоре, сохранение и защита армянской идентичности исторически являлись первостепенной задачей диаспоры. Однако необходимо признать, что, несмотря на упорные усилия в этом направлении, в послевоенное время начался процесс ассимиляции армян. В настоящее время значительная часть этой общины уже не

владеет армянским языком и может считаться полностью интегрированной в польское общество.

Ключевые слова и словосочетания: многоязычная среда, родной язык, языковая ситуация, польская община, преподавание армянского языка, язык диаспоры

Բազմալեզու միջավայրում գործառող լեզուն սովորաբար բավականաչափ տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական և զբաղմունքային բնութագրերի. պետական լեզվից բացի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ նույնպես գործառու են, մայրենի լեզուն միայն մեկը չէ, կա նաև տարբեր քաղաքներին ու տեղանքին բնորոշ ընդգծված մասնագիտացում: Բազմալեզու միջավայրում լեզվավիճակը ոչ միայն ձեռք է բերում իրեն բնորոշ դեմք, այլև որոշակի ազդեցություն է թողնում տվյալ տեղանքից դուրս ապրող լեզվակիրների վրա:

16-17-րդ դդ. հայերի նկատմամբ սկիզբ են առնում տնտեսական, կրոնական հալածանքներ: Նրանց պարտադրվում է կաթոլիկություն ընդունել, որն էլ դառնում է հայերի ուժացման գլխավոր պատճառը և սկիզբը: 18-րդ դ. Լեհաստանի անկախության կորուստն ու վերաբաժանումները Ավստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի միջև արագացնում են թուլացած լեհահայ գաղութի քայքայումը: 19-րդ դ. հայերն ամբողջությամբ արդեն լեհացել էին: Այս շրջանում պայքար է սկսվում նաև լեհահայ կաթոլիկ եկեղեցին վերացնելու և լատինական կաթոլիկ եկեղեցուն միացնելու համար [1]: Ամենահին վերաբնակները հաղորդակցվում էին հայերենի և ղփչաղերենի՝ թյուրքական լեզվաընտանիքի ղփչաղական ճյուղին պատկանող (այժմ՝ մեռած) լեզվից ձևավորված խառը լեզվով [4]: Գրավոր խոսքում գործածում էին հայկական այբուբենը: Հին հայերենը՝ գրաբարը, պահպանվում էր միայն ժամերգության ընթացքում:

Ինչպես տեղեկացնում է հայագետ, իրանագետ, պրոֆեսոր *Անդժեյ Պիսովիչը*¹³, դեռևս 50-ական թվականներին արաբագետ պրոֆեսոր *Տադեուշ Լևինսկու* հրավերով Գլիվիցեից լեհահայ քահանա *Կազիմիր Ռոշկոն* գալիս է Կրակով, և պարսկերեն, արաբերեն, թուրքերեն սովորող մի խումբ ուսանողներ, այս թվում նաև Պիսովիչը, հնարավորություն են ունենում սովորել արևմտահայերեն: Բացի այդ՝ պրոֆեսորը հիշատա-

¹³ Տեղեկությունը հաղորդվում է Լեհաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ պրոֆեսոր Անդժեյ Պիսովիչի հետ հանդիպումների ընթացքում կատարված ձայնագրությունների և սղագրությունների հիման վրա:

կում է, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո որոշ ժամանակ Լվովում մի լեհահայ քահանա հայերենի դասեր է անցկացրել:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լեհահայերի մեծ մասը թողել է բնակավայրերն ու հեռացել երկրի արևմտյան շրջաններ՝ Կրակով, Վարշավա, Գլիվիցե: Այստեղ հայերը սակավաթիվ են եղել, այդ պատճառով դպրոցներ ու եկեղեցիներ չեն ունեցել, որն էլ նպաստել է մայրենի լեզուն մոռանալուն: Լեհահայ հին սերնդի ներկայացուցիչներից քչերն են տիրապետում հայերենին [2]: Պրոֆեսոր Պիսովիչի հիշատակությամբ հենց այս շրջանում Գլիվիցե քաղաքում մի եկեղեցի տրամադրվել է լեհահայ քահանա Կազիմիր Ռոշկոյին, որպեսզի նորեկ լեհահայերի համար հայերեն պատարագ անցկացնի: Հայերի մի խումբ միայն, որ խոսում էր արևմտահայերեն, Չերեմոշի Կուտի քաղաքում ապրել է մինչև 20-րդ դ. 30-ական թվականները [4]: Պրոֆեսոր Պիսովիչի բանավոր հաղորդմամբ՝ Կուտիի հայերը խոսում էին արևմտահայ բարբառով, որի նմուշները հավաքել, ֆրանսերեն, այնուհետև նակեհերեն թարգմանել և տպագրել է վերոհիշյալ Կազիմիր Ռոշկո քահանան: Այժմ պրոֆեսոր Պիսովիչը տպագրության է պատրաստում Կ. Ռոշկոյի դոկտորական աշխատանքի մի մասը¹⁴, որը նվիրված է Կուտի քաղաքի արդեն մեռած լեհահայ բարբառի քերականությանը: Հետաքրքրական են հատկապես լեհահայ այդ բարբառի 10-12 նմուշները, որոնք լեհահայ քահանա Ռոշկոն անձամբ է հավաքել բարբառակիրներից, մեքենագրել և խմբագրել: Պրոֆեսոր Պիսովիչը բանավոր հաղորդմամբ նշում է. «Մի բան կարող եմ ասել, որ այդ բարբառի և արևելահայ որևէ բարբառի միջև եղած տարբերությունն այնքան մեծ է, որ արևելահայ պատմաբան Ռ. Համբարձումյանը, որը թեկնածուական աշխատանք է գրել Սադոկ Բարոնչի, այսինքն՝ մի լեհահայ պատմաբանի մասին, գնացել է տիկին Աննա Մոյզեսովիչի¹⁵ մոտ, և ինձ ասաց, որ չեն կարողացել հայերեն իրար հասկանալ, ստիպված լեհերեն են խոսել: Ես գնացի տիկին Աննա Մոյզեսովիչի մոտ և խնդրեցի, որպեսզի ինձ համար էլ ասեր այն

¹⁴ Կազիմիր Ռոշկոն լեհախոս հայ է, որը Գլիվիցե քաղաքի եկեղեցում լեհահայերի համար հայալեզու պատարագներ է անցկացրել, դասավանդել արևմտահայերեն, Կուտիի շրջանի լեհահայերի բարբառն է ուսումնասիրել, հավաքել բարբառային նմուշներ, խմբագրել, լեհերեն և ֆրանսերեն հրատարակել Կուտիի բարբառին նվիրված ուսումնասիրություններ, հատկապես «Folia Orientalia» ամսագրում:

¹⁵ Աննա Մոյզեսովիչը լեհահայ կին է, Կուտիի լեհահայ բարբառի կրող, որի՝ Կրակովում գտնվող տանն ապրել է պրոֆ. Ա. Պիսովիչը:

տեքստերը, որոնք ասել էր քահանա Ռոշկոյին: Երեք անգամ նրա մոտ գնալով՝ ձայնագրեցի դրանք. կարելի է ասել, որ նրա արտասանությունը վստահելի էր, որովհետև բաղաձայնների երեք շարքերը շատ լավ տարբերում էր, գիտեր թե՛ շնչեղների, թե՛ խուլերի մասին: Արևմտահայերենում հակառակն է՝ շնչեղները խլանում են, իսկ խուլերը՝ ձայնեղանում: Եվ սա նա լավ տարբերում էր, բանավոր կերպով, իհարկե: Խոսքը գրության մասին չէ. նա գիր չգիտեր, բայց գիտեր քար > կար, կին > գին բառերի տարբերությունը: Մի բան կար, որ լեհերենի և ուկրաիներենի ազդեցությամբ փոխվել էր. Կուտի քաղաքի այդ բարբառով խոսող մարդիկ չէին արտասանում ը, այլ ասում էին՝ ե, ինչպես լեհերենում է: Օրինակ, դպրոցի փոխարեն արտասանում էին դեբրոց, Մկրտիչ՝ Մեգերդիչ: Ոչ թե ուսերենի նման, որտեղ միջնալեզվային արտասանության է՝ мы, вы, այլ ուկրաիներենի և լեհերենի. մենք ասում ենք me, we: Այսինքն՝ առաջնալեզվային արտասանությամբ, որը մասամբ տարբերվում է ուսերենից: Երկրորդ տարբերությունն այն էր, որ նրանք չէին տարբերակում ո-ն և ր-ն: Այս երկու հիմնական հնչյունական տարբերությունները կային¹⁶:

Նոր հայերը, որոնք հիմնականում զբաղվել են առևտրով, չնայած աշխատանքային և օրենսդրական խնդիրներին, մտադիր չէին հայրենիք վերադառնալ: Նրանց երեխաները կա՛մ դպրոց չէին գնում, կա՛մ էլ հաճախում էին լեհական դպրոցներ, քանի որ հայկական տարրական և նույնիսկ կիրակնօրյա դպրոցներ Լեհաստանում չկային: Սակայն հայ երեխաներին ընդունում էին միայն նախադպրոցական հաստատություններ, որի շնորհիվ հայերն աստիճանաբար ինտեգրվում էին լեհ հասարակությանը, իսկ միջնակարգ կրթական հաստատություններ ընդունվելը մերժում էին, որի պատճառով հայերի մի մասը հոգեբանական խնդիրներ էր ունենում: Բազմաթիվ ընտանիքներ ստիպված էին լինում երեխաներին թողնել Հայաստանում, քանի որ նրանց չէին ընդունում լեհական դպրոցներ, և շատերը Լեհաստան էին մեկնում միայնակ [3]: Բացի այդ՝ հայերը անհրաժեշտության դեպքում այցելում էին լեհ կաթոլիկ եկեղեցի, քանի որ Լեհաստանում Հայ առաքելական եկեղեցին չուներ իր թեմը:

¹⁶ Տեղեկությունը հաղորդվում է Լեհաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում պրոֆ. Ա. Պիսովիչի հետ հանդիպումների ժամանակ կատարված ձայնագրությունների և սղագրությունների հիման վրա:

2005 թ. հունվարի 6-ին հաստատված «Ազգային, էթնիկական փոքրամասնությունների և շրջանային լեզվին վերաբերող օրենսդրության» համաձայն՝ Լեհաստանի Հանրապետության տարածքում հաստատված հայկական համայնքը համարվում է ազգային փոքրամասնություն, ըստ այդմ՝ այն կարողանում է օգտվել ազգային փոքրամասնություններին տրվող արտոնություններից, այդ թվում՝ իրենց անունները փաստաթղթերում գրել հայերենի օրենքների և կանոնների համաձայն, անձնական և հասարակական կյանքում ազատ կիրառել հայոց լեզուն, հայոց լեզվով տեղեկություններ փոխանցել և ստանալ, սովորել հայոց լեզու և հայերենի դասեր ունենալ, դիպլոմներում և ավարտական փաստաթղթերում հայերենի մասին նշում ունենալ, իրականացնել կրթական, գիտական, մշակութային զանազան միջոցառումներ և ստանալ ֆինանսավորում օրենքով սահմանված չափով Լեհաստանի Հանրապետության ազգային, էթնիկական փոքրամասնությունների և կրոնական գործերի նախարարության կողմից [6]:

Մինչև 2017 թ. Լեհաստանի հայ համայնքի երեխաները հայերեն կարող էին սովորել կա՛մ հայկական շաբաթօրյա դպրոցներում, կա՛մ մասնավոր պարապմունքների շնորհիվ: Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում հայկական *կիրակնօրյա առաջին դպրոցը* բացվել է 2003 թ.: Մարգարիտա Երեմյանի ջանքերով: Դպրոցում հայ մանուկներին սովորեցրել են հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն: Սկսած 2017 թվականից՝ դոկտոր Հայկ Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ *Կրակով քաղաքի թիվ 50 լեհական դպրոցում* (հասցեն՝ փող. Կատովիցկա 28) հայերենը դասավանդվում է որպես դպրոցական լիարժեք առարկա: Շատ կարևոր ձեռքբերում է, որ «Հայոց լեզու» առարկայից ստացած գնահատականը հաշվվում է աշակերտի ընդհանուր տարեկան գնահատականը ամփոփելիս և գրանցվում է աշակերտի ավարտական վկայականում [6]: Կրակով քաղաքի № 50 *հիմնական դպրոցը* Լեհաստանի միակ հանրակրթական ուսումնական հաստատությունն է, որտեղ հայոց լեզու առարկան դասավանդվում է շաբաթական 3 անգամ [7]:

Լեհահայերի միությունների և ՀՀ դեսպանության աջակցությամբ Լեհաստանի տարածքում ներկայումս գործում են հայկական մի քանի դպրոցներ և խմբակներ: Շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներում կա-

րող են սովորել վեց և ավելի տարիք ունեցող բոլոր հայ երեխաները և պատանիները: Այնտեղ նրանք սովորում են տառաճանաչություն, հայերեն գրել և կարդալ, ինչպես նաև ծանոթանում են հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և հոգևոր արժեքներին: Դպրոցներում գործում են նաև երգի ու պարի խմբակներ: Կազմակերպվում են բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ և էքսկուրսիաներ: Աշակերտներին տրվում է հայեցի դաստիարակություն: Վարչավայի և Կրակովի մի շարք դպրոցներում՝ կանոնավոր և ոչ կանոնավոր հիմունքներով բացվել են հայոց լեզվի և մշակույթի դասընթացներ [7]: Մշակութային տարբեր միություններ կազմակերպում են հայերենի դասընթացներ, որոնք արևելահայերեն են անցկացվում: Այս առումով բավական մեծ և խոսուն է Կրակովի «Հայ մշակութային ընկերության» դերակատարումը:

Բուհական համակարգում հայերենի ուսուցման գործընթացում նշանակալից դեր է ունեցել պրոֆեսոր *Անդժեյ Պիսովիչը*¹⁷: Դեռևս ուսանողական տարիներից նա հետաքրքրվել է արևելյան լեզուներով: Չնայած արտաքին՝ քաղաքական և պատերազմական տարիների դժվարություններին՝ կարողացել է կրթաթոշակներ հայթայթել և ուղևորվել Պարսկաստան ու Հայաստան՝ սովորելու պարսկերեն և հայերեն: 1960-ական թվականներին արևելահայերեն է սովորել Երևանի պետական համալսարանում, այնուհետև՝ մի քանի տարի անց՝ Ֆրանսիայում սովորել է գրաբար և արևմտահայերեն: 1970-ականներից ղեկավարելով Յագելոնյան համալսարանի իրանագիտության բաժինը՝ պրոֆեսորը դասավանդել է պարսկերենի քերականություն, սակայն գործադրած ջանքերի շնորհիվ կարողացել է հայերենի ուսուցումը ներառել կրթական գործընթացում: Այն կրթական ծրագրերում ընդգրկվել է որպես երկրորդ լեզվի ուսուցում և որպես օժանդակ միջոց իրանագիտական բաժնի ուսումնառության համար: Ավելի ուշ՝ 1991 թվականին, պրոֆեսոր Պիսովիչը՝ որպես հրավիրյալ դասախոս, Հոլանդիայի Լեյդենի համալսա-

¹⁷ Հայագետ Պիսովիչի աշխատությունները բազմալեզու են: Նրա ուսումնասիրությունների շրջանակում են ժամանակակից երկնյուղ հայերենը, հայ բարբառագիտությունը, հայաստա լեհերեն վավերագրությունը: Մեծ հայագետը աննկարագրելի աշխատանք է կատարում ցայսօր՝ հայկական մշակույթը տարածել ու նպատակամղումով: Նրա թարգմանությամբ և աշխատասիրությամբ լույս են տեսել Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Պ. Սևակի ստեղծագործությունները, հրատարակվել են Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանին», Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները»՝ համապատասխան ծանոթագրություններով:

րանում դասավանդել է հայ բարբառագիտություն՝ անգլերենի միջնորդությամբ: Հայ բարբառագիտության նկատմամբ հետաքրքրությունը ևս առաջացել էր ուսանողական տարիներին, երբ Գուրգեն Սևակից հանձնարարություն էր ստացել ուսումնասիրելու Փարպի գյուղի բարբառը¹⁸: Լինելով ազգությամբ լեհ՝ պրոֆեսոր Պիսովիչը մեծ նվիրումով դասավանդել ու տարածել է հայերենը՝ իր ուսանողների մեջ հետաքրքրություն արթնացնելով հնագույն լեզվի և Հայաստանի նկատմամբ:

Այսպիսով՝ կարելի է հավաստել, որ ինչպես հայկական մյուս համայնքներում, այնպես էլ լեհական սփյուռքում, հայապահպանությունը եղել և շարունակում է մնալ սփյուռքի ամենագլխավոր խնդիրը: Ստեղծվել են հասարակական, քաղաքական, բարեգործական, կրթական, մշակութային, երիտասարդական զանազան կազմակերպություններ, որոնց հովանու ներքո էլ գործում են դպրոցներ, մշակութային կենտրոններ, կազմակերպվում են հայկական մշակույթի և լեզվի պահպանմանն ու տարածմանն ուղղված միջոցառումներ: Գործադրվում է մեծ ջանք ազգային ինքնությունն ու մշակութային ավանդույթները պահպանելու համար: Չնայած կատարվող աշխատանքներին՝ պետք է նաև արձանագրել, որ հետպատերազմյան շրջանից սկսած սկսվել է հայերի ուժացման գործընթացը: Այժմ այդ համայնքի մեծ մասը հայերեն չգիտի, և նրանց կարելի է համարել ամբողջովին ծուլված լեհական հասարակության մեջ:

Գրականության ցանկ

1. Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Ե., 2001:
2. Ասատրյան Ա., Հայ-լեհական հարաբերությունները 1991-2018 թթ., Ե., 2021:
3. Մաթևոսյան Մ., Լեհաստանի հայ համայնքի դերը Հայաստան-Լեհաստան հարաբերությունների զարգացման գործում, <https://arar.sci.am/dlibra/publication/43981/edition/39443/content>
4. Stopka K., Zieba A., Ormianska Polska, Warszawa, 2018.

¹⁸ Տեղեկությունը հաղորդվում է Լեհաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ պրոֆ. Անդժեյ Պիսովիչի հետ հանդիպումների ընթացքում կատարված ձայնագրությունների և սղագրությունների հիման վրա:

5. Czasopismo ormiańskie "Awedis"»: www.awedis.ormianie.pl:
6. Ustawa o MNiE oraz o języku regionalnym w języku ormiańskim.»,
<https://arc.lublin.uw.gov.pl/wsoic/ustawa-o-mniejszo%C5%9Bcach-narodowych-i-etnicznych-oraz-o-j%C4%99zyku-regionalnym-t%C5%82umaczenia-ustawy>.
7. <https://poland.mfa.am/hy/community-overview/>